

կրթութեան գործում, հետզհետե կազմակերպու-
ում է Ռուսաստանում եկեղեցական գաղտնալա-
րութիւնն: Արգէն կարգադրուած է, որ ամէն տեղ
ուր հետաւոր է եկեղեցական ծխական դըպ-
րոցներ, գրագիտութեան դպրոցներ և օրիորդաց ու
տղայոց հոգևոր դպրոցներ բացուին: Մի նոր դպրո-
ցական վարչութիւն է կազմուել Ե. Սինոդին կից,
որին ենթարկուած պիտի լինին թեմական տեսուչ-
ները:

Խղճմտանքի ազատութեան խնդիրն օրէ ցօր
աւելի մեծ տեղ է բռնում ռուսաց մամուլի մէջ:
կրօնի և դաւանութեան ազատութեան պաշտպան-
ներն հետզհետե այնպիսի փաստեր են լոյս ընծա-
յում որոնք անհրաժեշտ են կացուցանում այժմեան
վիճակի փոփոխութիւնը: Ինչպէս արտասահմանեան
թերթերն հաւատացնում են, բարձրագոյն կառա-
վարութեան ցանկութիւնն էլ այն է, որ խղճմտան-
քի ազատութիւնն աւելի որոշ ու լայն կերպով
գործ դրուի Ռուսիայում:

ԱՆՊԱՅՄԱՆ ԾԵՆՆԵՐ:

Այս ամառուան ընթացքում անգլիկան եկե-
ղեցին պարտութիւն կրեց մի խնդրում, որի հա-
մար կէս դարու չափ է որ կուռում էր: Անգլիա-
կան պարլամենտը վաղուց ընդունել էր այն օրէնքը,
որ թողլ է տալիս այրիներին ամուսնանալ իրենց
քնինների հետ: Այս օրէնքը միշտ մերժուում էր
լորդերի ժողովում, բայց այս տարի ընդունուեցաւ
չը նայելով հոգևորականութեան ճիգերին: այս օրէն-
քի համար ձայն է տուել նոյն իսկ թագաժառան-
գը՝ Վալլիսի դուքսն: այլև նախարարացեալ Սո-
լըքիւրին:

ԲՈՂԱՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ:

ԳԾՐՄԱՆԻԱ:

Մենամարտութեան դէմ զինուած է մի քանի
ամսից ի վեր Գերմանիայի հասարակական կար-
ծիքը: յայտնի է որ բազմաստորագիր բողոքներ են
ուղղուած գերմանական ռայխստագին մենամարտու-
թեան դէմ և կառավարութիւնը խոստացել է մե-
նամարտութիւնն խափանող օրէնքներ առաջարկել:
Գերմանական բողոքական սինոդը մի շրջաբերական
է հրատարակել, որով արգելում է պատարներին
մենամարտութեան ժամանակ մեռածներին քրիստո-
նէական ծիսով թաղելը:

Յայտնի քարոզիչ և քաղաքական գործիչ
Շտեօկկէրը բաժանուելով Քրիստոնեայ
ընկերավարներից մի նոր ընկերութիւն է
հիմնել, որ կոչուելու է կրօնական—ընկերական և
որի նպատակը պիտի լինի մաքառել կրօնական—հա-

սարակական սկզբունքների համար: 2ր նայելով
Շտեօկկէրի հեղինակութեան հասած հարուած-
ներին, այս նոր կուսակցութիւնը հետևողներ է
գտել արգէն:

Փրկութեան բանակի զօրավար Բուլը
վերջերս Բեռլին է ժամանել և քարոզութիւններ
արել իւր ձեռնարկած գործի համար, սակայն ինչպէս
երևում է ցարդ հրատարակուած զեկուցումներից,
Փրկութեան բանակի քարոզչի անձնաւորութեան
արած տպաւորութեան համապատասխան չէ նորա
ձեռք բերած յաջողութիւնը: Փրկութեան բա-
նակի հետևողների հիւանդոտ և դառանցական ըն-
թացքը չեն հաւանում գերմանացիք և հաղիւ թէ
նրանցից հետևողներ գտնէ գեներալ Բուլը:

Ն. Բ.

Շարունակում ենք քաղուածքներ անել Christ-
liche Welt թերթի մէջ Հայոց մասին տպագրուած
յօդուածներից:

Այս թերթի խմբագիրը 29 հոկտեմբերին ազա-
տելով եւրոպական պետութիւնների քաղաքականու-
թիւնը և մամուլի բռնած ընթացքը՝ մասնաւորապէս
կանգ է առնում Գերմանիայի վերայ և թուում է մի
առ մի այն հիմունքները, որոնք կարող էին դրդել նո-
րան անտարբեր մնալու հայկական հարցում: Եթէ
պատճառն օսմանեան պետութեան հետ ունեցած բա-
րեկամութիւնն է, նկատում է նա, վստահութիւնը
թէ նոքա զօրանալու և վերանորոգուելու վերայ են
թէ սուլթանը բարի ձգտումներ և նպատակներ ու-
նի՝ արտաքին ազգեցութիւններն են միայն որ խնե-
գարում են (ինչպէս այդ հաւատացնում են մի քա-
նի գերմանական լրագիրներ, աշխատելով համակ-
րութիւն վաստակել գէպի թուրքերը նորա համար)
որ գերմանական սպաներ են նոցա զօրքը կազմակեր-
պողը) անտեղի է այդ բարեկամութիւնն ու վստա-
հութիւնը, իսկ պարծենալ թէ իրենք գործիքներ են
պատրաստում այնպիսի բարբարոսութիւնների հա-
մար, որպիսիք տեղի ունեցան Հայաստանում և Կրէ-
տէում: չափազանց տգեղ է, եթէ Օսմանցւոց թողնե-
լիք ժառանգութիւնից օգտուելու դիտումն է պատ-
ճառ՝ կնշանակէ Գերմանիայի գործ դրած քաղաքա-
կանութիւնն ևս ոչնչով բարձր չէ Բարձր. Գրան քա-
ղաքականութիւնից, չոր իւր հայ հպատակներին կո-
տորել է տալիս իրեն անհաճոյ տարրերից ազա-
տուելու համար: սակայն այդպիսի վատութեան
այդպիսի արիւնտ շահագործութիւնների ընդունակ
համարել Գերմանական քաղաքագէտներին կարելի
չէ: Աւերջապէս եթէ հասարակութեան մէջ գեղե-
կան շրջաններ, որոնց կարծիքով հայերն են կոտո-
րածների համար մեղաւոր, կառավարութիւնն այդ

պիսի կարծիք ունենալ չէ կարող. նորան շատ լաւ յայտնի պէտք է լինին իսկական պատճառները. նա պէտք է գիտենայ, որ բացի Զէյթունից, ուր հայերն արդարեւ փոքր ի շատ անկախութիւն պահել էին, և մի քանի տեղերից, ուր աննշան թուով մարդիկ, յետին ծայրահեղութեան մէջ, ծարահատեալ զէնք են ձեռք ձգել ինքնապաշտպանութեան համար՝ նոքա միայն անմեղ զոհեր են եղել, և մի ընդհանուր յեղափոխութեան կամ ապստամբութեան մասին խօսք լինել չի կարող:

«Անտեաքար» եղբակացնում է պատտոր Ռադէն, միայն մի հասկանալի բացատրութիւն է մընում մեր քաղաքականութեան համար դէպի Տաճկաստան ու Հայաստանը, Օսմանեան պետութիւնը ամենքին շատ լաւ ծանօթ է, ուստի և ամենքը գիտեն. թէ իւր ամբողջութեամբ, թէ մաս մաս առաժնաւորեալ, անընդունակ է բարենորոգութեան. Տաճկական կառավարութիւնը հաւանականօրէն բարենորոգումներ մտցնելու յօժարութիւն չունի, բայց եթէ ունենար իսկ՝ չէ կարող. Այդ նպատակի համար նորան պակասում է ամեն բան. ինչպէս մի կրօն, որ նպաստէր կամ զոնէ խռչնդոտ չլինէր բարենորոգումների, այնպէս և զրամ, մարդիկ, զանազան կարեւոր միջոցներ, Յաճախ ասուում է՝ պետութիւնները միայն նորահամար են տատանուում տաճկական տերութիւն կողմէ այդ խրտուիչակին վերջ գնելու, որ չգիտեն ինչպէս բաժանեն, Հարկաւ այդ կասկածը հասկանալի է, որովհետեւ նոյնչափ դժուար է հաշտ կերպիւ մի կանոնաւոր բաժանումն անել, որչափ դժուար պէտք է լինի իւրաքանչիւրի համար այդ ժառանգութիւնն ստանձնել ու նոր պարտականութիւններն ուղիղ կատարել. Սակայն ոչ միայն այս հասկանալի կասկածի պատճառաւ, այլ և նորահամար, որ զեռ բանն այդտեղ չէ հասել, խօսքն առայժմ բաժանման մասին չէ, եւ հէնց գորանից է, որ եւրոպական քաղաքագիտութիւնն անելանելի գրութեան մէջ է գտնուում. Տաճկաստանը ներկայանում է այստեղ իրրեւ մի այնպիսի քայքայուած ու խախտու շէնք, որ այլ ևս ոչ մի կարկատան չի վերցնում. 24այ ոչ մի խորհուրդ, ոչ մի գործ, որ մի արգիւնք յառաջ բերէր և նպատակի հասցնէր. — Այս պիտով Տաճկաստանի անընդունակութիւնն անաւան անաւան ծարակ է դարձնում եւրոպական քաղաքագէտներին ամեն մի նորան վերաբերեալ հարցումս:

Այնուհետեւ յօգուածագիրն ի նկատի է առնում իսլամի յարուցած արգելքները և համեմատելով հայերին Արեւացիների հետ՝ գտնում է, որ վերջիններս ի շարս ուրիշ հանգամանքների շատ ա-

ւելի բաղաւոր են նորանով, որ եւրոպայի աչքի առաջ են գտնուում. նորանց հասած ամեն մի զրկանքի համար իսկոյն և եթ լուր է հասնում ամեն կողմ մինչդեռ հայերն աչքից ու մտքից հեռուն եւրոպացիների առաջ փակ նահանգներում ծաւատագրի քմահաճոյքին մատնուած. իսկ քաղաքագէտները ստիպուած են լինում միայն այն խնդիրներով զբաղուել, որոնք այս կամ այն կերպիւ հրապարակ են ելեր. «Գուցէ հայերին աւելի մեծ ծառայութիւն մատուցանել կարելի չէ, ասում է նա. քան օգնել քակելու լուրութեան և քողարկման այդ կնիքը, որ գրուած է գրութե մեր ամբողջ ամեն օրեւայ մամուլի վերայ. Տաճիկների գործած եղեռների եղանակը, տեղութիւնը, չափը պէտք է վերջապէս յայտնի լինի բրիտանեայ եւրոպային. ապա թէ ոչ ինչպէս կարող է մի կենդանի հրապարական կարծիք կազմուել, որի հետ պետութիւններն ևս պարտաւորուին հաշիւ տեսնել. Անկասկած իւրաքանչիւր մղւլա քարոզում է Տաճկաստանում՝ Զէհազ (կրօնական պատերազմ) է այժմ հայ բրիտանեանների դէմ և ահա այլապէս խաղաղասէր ու երկչոտ մահմեդականը բորբոքուում է այն սոսկալի մոլեռանդութեամբ, որ ոչ մի չափ, ոչ մի գուծ չէ ծանաչում. Գեռ ամեն օր Յորի շարժարանքների նկարագիրներ են գալիս այդ երկրից. և եթէ նոքա աննշան են անցեալ ձմեռ տեղի ունեցածների համեմատութեամբ, հաւանականաբար աննշան կլինին նաև այն ամենի զիմաց, ինչ որ մօտակայ ձմեռը հետը պէտք է բերէ. Թուրքի բանը վերջերս այնքան լաւ է գնացել, որ յիմար կլինի, եթէ այդպէս չշարունակէ:

— Եւ ահա այս է հայոց նկատմամբ եւրոպական և մասնաւորապէս գերմանական քաղաքագիտութեան մեզ ամենից աւելի զայրոյթ պատճառող կէտը. Գուցէ արդարեւ դժուար է տաճկական գործերն առաջ քշել, և ոչինչ չէ մնում, քան եթէ խորհուրդներով ու սպառնալիքներով բաւականանալ. այնուամենայնիւ տըպուորութիւնն այնպէս է, որ հայկական խնդրում ոչ մի լուրջ միջոց ձեռք չէ առնուել. Թող մեր սուտը ցոյց տան, պատրաստ ենք յօժարութեամբ խոստովանելու, որ սըխալուած էինք. Բայց այդ այժմ մեր հայեացքն այն է, որ եւրոպական պետութիւնները, Գերմանիան ամենից առաջ՝ Բեռլինի գաշնագրութեան 61-րդ յօդուածը ամօթալի կերպով խախտել են:

Յաջորդ 30 համարում շարունակելով խօսել Տաճկաստանի բարենորոգումներ մտցնելու ընդունակութեան մասին՝ նա ներկայացնում է երկրի

կրօնը, Իսլամը, իբրև գլխաւոր խոչընդոտ և յարում, Թող հեռուից քրիստոնէութեան դէմ զինուած աղտամիտները կամ տգէտ լրագիր գրողներ խախտել իբրև մաքրագոյն միաստուածութիւն կամ առհասարակ մի նախապատել կրօն երևակայեն՝ իսկապէս ասած այդ կրօնն է, և ոչ այլ ինչ, տաճկական պետութեան ու նորա ժողովուրդների պատուհասը, նա է, որ ամեն յառաջագիւծութեան արգելք է լինում, ամեն մի բարեգործ անկարելի դարձնում, Ինչքան էլ արեւելքի քրիստոնեայ աղքեկը քրիստոնէութեան անուան անպատուութիւն բերեն՝ նոցանից ոչ մէկն այնպիսի անյուսալի վիճակի մէջ չէ, ինչպէս մահմեդական տաճիկ պետութիւնը, նորա մահաջու կողմը կրօնի մէջ պէտք է որոնել, որ նորա կենսատուն է և նեցուկը, ճակատագրի հաւատը խանգարում է կամքի ամեն մի զօրեղ վճիռ. հաւատարիմ լինել Մուհամէդին և և Աւրանին՝ ահա հաւատացողի իսկական կոչումը, որով հին առաքինութիւնները թէ մոլութիւնները, բարոյական և թէ անբարոյական սովորութիւնները հաւասար խտութեամբ պահպանուում են և աւելի ու աւելի կորցնում իրենց կենդանութիւնը, Անհատաների դէմ եղած ատելութիւնը տարածուում է ամբողջ քրիստոնէական քաղաքակրթութեան վերայ, Տաճկաստանում գործարաններ ու առևտրական ընկերութիւններ չկան, Եւրոպայի հետ յարաբերութիւնը քրիստոնեաներն են պահպանում, մեր համալսարաններում՝ կարելի է արեւելեան թուրք ազգերից երիտասարդներ տեսնել, միայն թուրքեր ոչ, * Բազմակնութիւնը թող չէ տալիս, որ կանոնաւոր ընտանեկան կեանք յառաջ կայ, եթէ չքաւորը մի կին իսկ ունենայ՝ նորա հաւատարմութեան վրայ վստահ չէ երեքը, Ստրկութիւնը թէև թղթի վրայ սկզբունքով վերացրած՝ այժմ ևս ինչպէս առաջ պահուում է հրապարակաւ և պետութիւնները ծիծաղելի են դարձնում իրենց, երբ Լփրիկէում ստրկավաճառութիւնն արգելելով՝ Օսմանեան տէրութեան պէս ստրուկների մի ահագին վաճառանոցի հետ բարեկամական կապեր են պահպանում, Փոքր Ասիոյ խորքը հրապարակների վերայ կարելի է այժմ հայտնիներ 5 կամ 10 մարկով (2/—5 բուրլի), իսկ ծովափնեայ տեղերում 20—40 մարկով գնել,....

Տաճիկները կոտորած չեն էլ անում առանց Իմամի՝ իրենց հոգեւոր պետի, այսինքն Սուլթանի, գիտութեան և կամքի, եթէ Սուլթանը կրօնական

* Բացառութիւնները հաստատում են միայն կանոնը, փառք զայն են այդ թուրքեր ուսանելու, բայց այդ էլ իբր տեսակի ուսանել է:

տեսակետով արգելէր քրիստոնեաների կոտորածը, նորա չէին անի, Սակայն Կ. Պօլսից բոլորովին հակառակ նշանաբանն է տրուած. ջէ հա գ՝ կրօնական պատերազմէ, իսկ այսպիսի պատերազմում իւրաքանչիւր մահմեդական պարտաւոր է զենք շարժել, նորա խղճի առաջ այլ ևս կանոնաւոր զօրքի և խաղաղ քաղաքացիների մէջ խտրութիւն չկայ, Մոլեռանդութիւնն պէն ժամանակ՝ հէնց որ սոսկալի նշանաբանը տրուեցաւ, գթութեան ու մարդասիրութեան ամեն զգացում խեղդում է, Հարկաւ վերջին արհաւիրքների միջոցին ևս գտնուել են մանաւոր տաճիկներ, որոնք բարեկամական ծառայութիւններ չեն խնայել իրենց նախկին լաւ հարեան՝ վտանգի ենթակայ քրիստոնեաների համար, բայց նոցա թիւը չնչին է, Աւելի յաճախ են այնպիսի դիպուածներ, երբ նոքա գաղանային վայրագութեամբ յարձակուել են անհաւատների վերայ, ինչպէս օրինակ՝ Վամասկոսում, ուր ամենախաղաղասէր քաղաքացիները բռնուեցան կրօնական կատաղութեամբ, Տանջիլն ու սպանելը խաղ ու պար էր նոցա համար:

Ինչ գործ ունի այսպիսի մի տէրութիւն, որի համար այսպիսի մի կրօն անփոփոխելի օրէնք է՝ Եւրոպական տէրութիւնների շարքում, Ինչո՞վ է արժանացել այն բարեհաճութեանը, որով վերաբերուում են դէպի նա, Ինչո՞ւ շարունակ այնպէս են ձևացնում, իբր թէ բարենորոգումներ են սպասում նորանից՝ քրիստոնէական քաղաքակրթութեան համապատասխան:

Տաճկաստանի համար միայն մի միջոց կայ բարենորոգումներ մտցնելու, թող խնամակալութեան նիւթը դնեն նորան, Այդ կերպով արդէն բաւական ձեռք է բերուած, որքան Եւրոպայի աչքն ու ձեռքը հասնել կարող էր, Միայն այս ճանապարհով կարելի է նաև հայկական արհաւիրքներին վերջ դնել, Այդ խնամակալութեան եղանակը գտնելը պէտք է քաղաքագէտներին թողուի, եթէ միայն պետութիւնները կամենան, անշուշտ կգտնեն մի եղանակ, որ Բարձր, Դուռն ևս կամայ թէ կամայ ընդունել կարող լինի—Աղիղ նայած՝ Տաճկաստանն արդէն այսօր իսկ խնամակալութեան ներքոյ է, Եւ ուրեմն խնամակալը պատասխանատու է իւր խնամածի արարքների համար:

Կա յ զ եր վ ե թ ի թ ու ց ի կ թ ե թ թ ե թ,
Հայաստանից և Հայաստանի համար—Լյոս
վերնագրով մի շուրք փոքրիկ աժանագին (4—5 կ.)
տետրակներ են լոյս տեսել Կայսերական թիւ
րեգործական հաստատութեան տպարանում՝ արտա-

ուպած նոյն հաստատութեան «Աղքատների և հիւանդների բարեկամ» թերթից, Christ. Welt-ի 29 հոլմ խօսելով մինչև այդ ժամանակ հրատարակուած երեք տետրակների մասին՝ Ռաբէն մեծ ուրախութեամբ ողջունում է նոցա հանդէս գալը թէև անյաջող է համարում առհասարակ նոցա խմբադրութիւնը, «Ա. տետրակը» ասում է նա՝ բաւական անյարմար է մեր դէպի հայերն ունեցած պարտականութեան մասին մի ուղիղ գաղափար տալու համար։ Իսկ այդ ամենից կարևորն է, որովհետև տե իրողութիւնը դժբաղդաբար ամենեւին այնպէս չէ, ինչպէս ներկայացնում է Գր. Գիսելհոֆ, առաջին իսկ երեսում գրելով հայերի տառապանքները ոչ մի սիրտ պող չեն թողնում, Յառաջաբանին հետևում է այդտեղ իրեն առաջին հատուած՝ Զէյթունի պաշարման մի նկարագրութիւնը, պատերազմական սոսկալի մի արկած։ Ինչպէս յայտնի է Զէյթունում հայերը բացառապէս այնպիսի դիրքի մէջ էին, որ կարող էր տաճիկների դէմ հաւասար ուժերով և բաւական յաջողութեամբ կռիւ վարել մինչդեռ հայկական արհաւիրքների բոլոր մնացած ընդարձակ տարածութեան վերայ այդ թշուառ ժողովրդի անմեղութիւնն ու անճարակութիւնը բոլորովին ուրիշ կերպ են երևան գալիս։ Պան յետոյ թէև այլ տեսակ տեղեկութիւնների, բայց այդ Ա. տետրակը չէ առաջնորդում դեռ եղելութիւնները լաւ հասկանալու։ Առհայտ փոխաբէն այդտեղ կրճատ ձևով Ա. է գրած՝ անտեղի բոլորովին, որովհետև ամենքն իրաւունք ունին պարզ տեղեկութիւններ առնելու և այսպիսի զգուշութեամբ ոչինչ և ոչոք պաշտպանուած չի լինի։

Բ. տետրակն արդէն աւելի լաւ է՝ սարսափների համառօտ պատմութիւններով հարուստ։ Շատ լաւ է վերջապէս Գ. տետրակը, Այդտեղ տեղեկութիւն է տրուում նախ հայ որբ երեխաներ Զմիւռնա տեղափոխելու դժուարութեան մասին, ապա պատմութեամբ է նահատակ Հոպսոն (°) Արուհայեթեանի մասին, որ բողոքական պատուր էր Առհայում։ Պակաս չեն այստեղ վերջապէս նաև աշխարհագրական ու պատմական տեղեկութիւններ և այլ հրահանգիչ ցուցմունքներ, որ իրաւամբ պէտք էր այսպիսի թուղթիկ թերթերից սպասել՝ ճշունած ժողովրդի բնաւորութեան ու անցեալին մօտից ծանօթանալու համար։ Այդ տետրակից առնում ենք հետևեալ նկատողութիւնը։

Ամերիկացիք (American Board) 1818 թ.-ից սկսած միսիոնարական ընդարձակ գործունէութիւն ունին Փոքր Ասիայում և մասնաւորապէս այն մասում, որ առաւել ասպարէզ է եղել հայկական խառնակութիւնների, Փոքր Ասիոյ մէջ, որ երեք

միսիոնարական գաւառների է բաժանուած, 14 գրականոր և 268 երկրորդական կեդրոնաւայրերում 45 ամերիկացի և 90 բնիկ հոգևորականներ ու 529 բնիկ ուսուցիչներ են աշխատում, 111 եկեղեցիներ կան 11835 ծխականներով, և 19812 տղաներ ու աղջիկներ այցելում են զանազան բարձր և ստորին կարգի դպրոցներ։—Հասկանալի է որ ամերիկական միսիոնի այս բողոքական խնամարկեալները թէև միայն մասամբ, բայց մեծ մասամբ հայեր են։

Կ. Վ.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

Ս Գ Ո Յ Օ Ր Ե Ր.

Թէ՛ ոգետրուիլ կարող ես կրկին, Թէ՛ կարող ես դեռ կըրակուիլ վշտից, Սիրտ իմ՝ շարատանջ, այս սուգն ահագին չերիւք է որ դու պատառուիս ցաւից։

Բարդ բարդ կուտակուած ամպեր քո գլխին, Սորանից էլ սեւ կը լինի թախիծ... Ա՛խ, թող արտասուքն իմ՝ մարած աչքից չեղեղի նման թափուի դառնագին։

Թէ՛ սիրտ իմ, դու դեռ այնքան աննկուն, Որ այս ցաւին էլ պիտի դիմանաս. Թէ՛ այնքան է դեռ քո յոյսն հաստատուն,

Որ սպասում ես թէ՛ կը շողայ արեւ, Նոր ոյժ ու նոր կեանք դարձեալ կ'ստանաս, Դարձեալ կը ծաղիկ զարուն քո առջեւ...

Ե. ՅՈՂԱՆՆՈՍԵԱՆ.

